



CCJE(2024)5

Ստրասբուրգ, 2024 թվականի դեկտեմբերի 6

ԵՎՐՈՊԱՅԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐ

(ԵԴԽԽ)

ԵԴԽԽ-ի թիվ 27 (2024) կարծիք

դատավորների կարգապահական պատասխանատվության վերաբերյալ

I. Ներածություն

1. Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԽԽ), Նախարարների կոմիտեի կողմից իրեն տրված տեխնիկական առաջադրանքին համապատասխան, պատրաստել է դատավորների կարգապահական պատասխանատվության վերաբերյալ սույն կարծիքը:

2. Դատավորների պատասխանատվությունը սերտորեն կապված է դատավորների անկախության հետ: Դատավորների անկախության հիմքերը թուլանում են, երբ դատավորների պատասխանատվությունը հստակ է պատշաճ ձևով կարգավորված չէ: Սա տեղի է ունենում այն դեպքում, երբ դատավորներն անհասկանալի հանգամանքներում կարող են բախվել իրենց պաշտոնավարման անվտանգության եւ (կամ) մասնագիտական առաջխաղացման հեռանկարների համար հնարավոր վնասակար հետ եւանքների: Կարգապահական

պատասխանատվությունը կար եւոր է ծառայողական պարտականությունների խախտման համար դատավորներին հանրության առջ եւ պատասխանատվության ենթարկելու համար: Դա միջոց է, որով հասարակությունը կարող է ապահովել, որ դատական համակարգը պատշաճ ձև եւով կատարում է իր գործառնությունները՝ այդպիսով ամրապնդելով դատական համակարգի նկատմամբ հանրային վստահությունը:

3. Վերջին տարիներին դատավորների պատասխանատվությունը դարձել է խիստ մտահոգիչ թեմա: Եվրոպական դատարանների կողմից կայացված բազմաթիվ որոշումներով վճռվել է, որ գործադիր մարմինը կարգապահական միջոցներ է կիրառել այն դատավորներին լռեցնելու կամ պաշտոնից ազատելու համար, որոնք որոշումներ չեն կայացրել հոգուտ իրենց¹: Հաշվի առնելով այս վերջին զարգացումները՝ անհրաժեշտ է խորհել դատավորների կարգապահական պատասխանատվության հիմքի, հիմնավորումների եւ սահմանների մասին:

II. Կարծիքի նպատակը եւ շրջանակը

4. ԵԴԽԽ-ն արդեն իսկ դիտարկել է այս հարցը «Դատավորների մասնագիտական վարքագիծը, մասնավորապես՝ էթիկան, անհամատեղելի վարքը եւ անաչառությունը կարգավորող սկզբունքների եւ կանոնների մասին» թիվ 3 կարծիքում: Սույն կարծիքի նպատակն է ուսումնասիրել Թիվ 3 (2002) կարծիքի ընդունումից ի վեր տեղի ունեցած բոլոր զարգացումները, գնահատել, վերլուծել դրանք եւ մշակել դատավորների կարգապահական պատասխանատվության չափանիշներ, ինչպես նա եւ դիտարկել դրանց ազդեցությունը դատավորների անկախության վրա: Այն պարունակում է բոլոր անդամ պետությունների համար կիրառելի հիմնական սկզբունքների եւ առաջարկությունների խումբ եւ նախատեսված է այնպիսի իրավիճակներ կարգավորելու համար, երբ վտանգված

¹ Տե՛ս Եվրոպական միության արդարադատության դատարան (ԵՄԴԴ), 2021 թվականի հուլիսի 15, C-791/19. *Հանձնաժողովն ընդդեմ Լեհաստանի* (Regime disciplinaire des juges) [*Commission v. Poland* (Regime disciplinaire des juges)], ECLI:EU:C:2021:596, ՄԻԵԴ, *Գրզեդան ընդդեմ Լեհաստանի* [ՄԴ] [*Grzeda v. Poland* [GC]], 2022 թվականի մարտի 15, թիվ 43572/18:

են դատական անկախությունը եւ անաչառությունը:

5. Սույն կարծիքում դիտարկվում են հետ ելյալ հարցերը.

ա. Ինչպե՞ս է որոշվում դատավորների կարգապահական պատասխանատվության պատշաճ կիրառման սահմանները:

բ. Ո՞րն է պատշաճ օրենսդրական դաշտը եւ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգը:

գ. Որո՞նք են դատավորների կարգապահական վարույթի հարուցման ընդունելի հիմքերը:

դ. Որո՞նք են կարգապահական վարույթի շրջանակներում դատավորների համար անհրաժեշտ ընթացակարգային երաշխիքները:

6. Կարծիքում անդրադարձ չի արվում դատավորների քաղաքացիական կամ քրեական պատասխանատվությանը, որոնք ինքնին բավականին ընդգրկուն թեմաներ են:

7. Չնայած սույն կարծիքում անդրադարձ չի արվում վեթինգին՝ ԵԴԽԽ-ն չի կարող բացարձակ անուշադրության մատնել այս հարցը: Վեթինգը չպետք է կիրառվի կարգապահական միջոցների փոխարեն: Այն նա եւ չպետք է կիրառվի որպես կոռուպցիայի դեմ պայքարի միջոց: ԵԴԽԽ-ն, այնուամենայնիվ, ընդունում է, որ վեթինգը կարող է թույլատրելի լինել, եթե իրականացվում է որպես մեկանգամյա արտակարգ ընթացակարգ՝ ավտորիտար կառավարությունից օրենքի գերակայությամբ առաջնորդվող ժողովրդավարական կառավարության անցում կատարելիս:

8. Կարծիքը կազմվել է ԵԴԽԽ-ի նախորդ կարծիքների, մասնավորապես՝ Թիվ 3 (2002) եւ Թիվ 18 (2015) կարծիքների, ԵԴԽԽ-ի դատավորների մագնա կարտայի (2010 թվական) եւ Եվրոպայի խորհրդի համապատասխան փաստաթղթերի հիման վրա, ներառյալ, ի թիվս այլնի, «Դատավորների կանոնադրության մասին» եվրոպական խարտիան, «Եվրոպայում ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ օրենքի գերակայության վիճակի

մասին» Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի 2023 թվականի զեկույցը, Նախարարների խորհրդի «Դատավորներ. անկախություն, գործունեության արդյունավետություն եւ պարտականություններ» CM/Rec(2010)12 առաջարկությունը, «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) «Դատական համակարգի անկախության մասին» զեկույցը, «Եվրոպական դատական համակարգերի գնահատման զեկույցը. Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (ԱԱԵՀ) 2024 թվականի գնահատման փուլ», Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) Դատավորների վերաբերյալ չորրորդ գնահատման փուլի արդյունքները, Իրավական համագործակցության հարցերով եվրոպական կոմիտեի (ԻՀԵԿ) դատական համակարգի անկախության եւ անաչառության ամրապնդմանն ուղղված գործողությունների ծրագրի իրականացման գնահատումը եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպային իրավունքը: Սույն փաստաթղթում նա եւ հաշվի են առնվում ՄԱԿ-ի «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքները», Դատավորների վարքագծի Բանգալորյան սկզբունքները, «Դատավորների անկախության, հաշվետվողականության եւ գործունեության որակի վերաբերյալ» Դատական խորհուրդների եվրոպական ցանցի (ԴԽԵՑ) զեկույցը, «Դատավորների անկախության եւ հաշվետվողականության մասին» ԵԱՀԿ-ի առաջարկությունները (Վարչավայի առաջարկություններ) եւ վերաբերելի այլ փաստաթղթեր, սակայն չեն սահմանափակվում դրանցով:

9. Կարծիքը կազմելիս նա եւ հաշվի են առնվել ԵԴԽԽ-ի անդամների՝ դատավորների կարգապահական պատասխանատվության մասին հարցաշարին տված պատասխանները, ինչպես նա եւ Եվրոպայի խորհրդի կողմից նշանակված փորձագետ Դկտ Յանիկա Յանի կողմից պատրաստված նախագիծը:

III. Դատավորների կարգապահական պատասխանատվության պատշաճ կիրառման սահմանների որոշումը

10. Դատավորի լիազորությունները կապված են ճշմարտության,

արդարության, արդարացիության եւ ազատության արժեքների հետ²: Դատավորներն իրենց սահմանադրական դերը կատարելու համար պետք է իրենց պարտականությունները կատարեն մասնագիտական վարքագծի բարձրագույն չափանիշներին համապատասխան³: Հասարակության կողմից դատական համակարգին լիազորությունների այսպիսի լայն շրջանակի վերապահմամբ ենթադրվում է, որ պետք է գոյություն ունենան որոշ միջոցներ՝ դատավորներին պատասխանատվության ենթարկելու եւ նույնիսկ պաշտոնից ազատելու համար այնպիսի լուրջ խախտումների դեպքում, որոնց մասով այդպիսի գործողության ձեռնարկումն արդարացված է⁴: Սա վերաբերում է մասնավորապես դատական համակարգում կոռուպցիայի դեպքերին, որոնք էապես նվազեցնում են դատավորների անաչառության եւ անկախության նկատմամբ հանրային վստահությունը⁵: Կարգապահական պատասխանատվությունը դատավորների կողմից իրենց պարտականությունների կատարումն ապահովելու միջոց է: Այդպիսով, այն նպաստում է արդարադատության իրականացման նկատմամբ հանրային վստահության պահպանմանը:

11. Պետական իշխանության բոլոր երեք ճյուղերը հաշվետու են այն հասարակությանը, որին ծառայում են: Դատավորների կարգապահական պատասխանատվությունը միտված է դատական համակարգի հաշվետվողականությունն ապահովելուն: Այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ դատական համակարգը գտնվում է պետական իշխանության մեկ այլ ճյուղի ենթակայության ներքո: Դա կհակասեր դատական համակարգի՝ պետական իշխանություն լինելու սահմանադրական կարգավիճակին, որը բաղկացած է անկախ արբիտրներից, որոնց գործառույթն է լուծել գործն անաչառորեն եւ օրենքին համապատասխան⁶: Այն նա եւ կխարխլեր իրավական պետության հիմքերը, որն իր քաղաքացիների համար երաշխավորում է կոնկրետ իրավունքներ

2 ԵԴԽԽ-ի թիվ 18 (2015) կարծիք, 18-րդ պարբերություն:

3 ԵԴԽԽ-ն իր թիվ 3 (2002) կարծիքում քննարկել է մասնագիտական վարքագծի այդ չափանիշները և սկզբունքները:

4 ԵԴԽԽ-ի թիվ 18 (2015) կարծիք, 33-րդ պարբերություն:

5 ԵԴԽԽ-ի թիվ 18 (2015) կարծիք, 33-րդ պարբերություն:

6 ԵԴԽԽ-ի թիվ 18 (2015) կարծիք, 20-րդ պարբերություն:

եւ ազատություններ⁷:

12. Որպես ընդհանուր չափանիշ՝ ԵԴԽԽ-ն նշում է, որ դատավորների անհատական իրավունքները եւ նրանց գործառության լեգիտիմությունը, որով հիմնավորվում եւ սահմանափակվում է նրանց պետական իշխանությունը, պետք է դատավորների կարգապահական պատասխանատվության համար սահմանեն պատշաճ սահմաններ: Կարգապահական պատասխանատվությունը չպետք է սահմանափակի դատավորների անհատական իրավունքների օրինական իրականացումը, ինչպես օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 10-րդ հոդվածով ամրագրված՝ արտահայտվելու ազատությունը, ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածով ամրագրված՝ անձնական կյանքի իրավունքը կամ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով ամրագրված՝ արդար դատաքննության իրավունքը⁸: Ավելին, դատավորների կարգապահական պատասխանատվության հիմքերը պետք է անքակտելիորեն կապված լինեն դատական համակարգի սահմանադրական դերի հետ: Սա ներառում է անհրաժեշտություն՝ ապահովելու, որ դատավորները հանդես գան որպես անկախ եւ անաչառ արբիտրներ, որոնք պահպանում են օրենքի գերակայության սկզբունքը, ինչպես նա եւ, որ նրանք ընդհանուր առմամբ նպաստեն արդարադատության իրականացման համակարգի պատշաճ գործունեությանը:

13. Դատավորների կարգապահական պատասխանատվության պատշաճ կիրառման սահմանների այսպիսի սահմանումից բխում են առանցքային սկզբունքները՝

ա. կարգապահական պատասխանատվությունն անհրաժեշտ է դատական համակարգի նկատմամբ վստահությունը պահպանելու համար.

⁷ Տե՛ս նաև ՄԻԵԴ, *Դենիսովն ընդդեմ Ուկրաինայի* [ՄՊ] [*Denisov v. Ukraine* [GC]], 2018 թվականի սեպտեմբերի 25, թիվ 76639/11, 83-րդ պարբերություն և հաջորդող պարբերությունները, *Բական ընդդեմ Հունգարիայի* [ՄՊ] [*Baka v. Hungary* [GC]], 2016 թվականի հունիսի 23, թիվ 20261/12:

⁸ Տե՛ս նաև ՄԻԵԴ, *Դենիսովն ընդդեմ Ուկրաինայի* [ՄՊ], 2018 թվականի սեպտեմբերի 25, թիվ 76639/11, 83-րդ պարբերություն և հաջորդող պարբերությունները, *Բական ընդդեմ Հունգարիայի* [ՄՊ], 2016 թվականի հունիսի 23, թիվ 20261/12:

բ. կարգապահական պատասխանատվությունը չպետք է խաթարի դատական համակարգի անկախությունը.

գ. կարգապահական պատասխանատվությունը կար եւոր է օրենքի գերակայության սկզբունքին համապատասխան պատշաճ արդարադատություն իրականացնելու համար.

դ. կարգապահական պատասխանատվության շրջանակը պետք է լինի հստակ սահմանված՝ օրենքի գերակայության սկզբունքին համապատասխանությունն ապահովելու համար.

ե. կարգապահական վարույթում ներգրավված ընթացակարգային մարմինները պետք է պահպանեն իշխանության բաժանման եւ արդարադատության պատշաճ իրականացման սկզբունքը.

զ. դատավորների՝ օրենքով սահմանված իրավունքների իրականացումը չպետք է առաջացնի կարգապահական պատասխանատվություն.

է. դատավորի նկատմամբ կիրառված ցանկացած կարգապահական տույժ պետք է լինի համաչափ:

IV. Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման օրենսդրական շրջանակը եւ իրականացման կարգը

14. ԵԴԽԽ-ի անդամ պետությունների՝ հարցաշարին տրված պատասխաններից ակնհայտ է դառնում, որ գրեթե բոլոր պետություններում առկա է դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու օրենսդրական շրջանակ: Որոշ երկրներում համապատասխան դրույթներն ամրագրված են սահմանադրության մեջ. երկրների մեծ մասում դրանք ձեւակերպված են օրենքներում՝ ուղեկցվելով լրացուցիչ կարգադրություններով, որոշումներով կամ կանոններով կամ առանց դրանց: Որոշ (բայց ոչ բոլոր) պետություններում դատավորները կամ դատավորների միավորումները մասնակցել են այս օրենքների մշակման գործընթացին:

15. Կարգապահական վարույթների իրականացման կարգը տարբեր երկրներում տարբեր է: Հաշվի առնելով դրանց ընդհանրությունները եւ տարբերությունները՝ կարգապահական վարույթների իրականացման համակարգերը կարելի է ընդհանուր առմամբ բաժանել երկու խմբի՝ խորհրդի համակարգ եւ դատարանի համակարգ: Խորհրդի համակարգը վերաբերում է այն համակարգին, որում վերջնական որոշումը կայացնում է դատական խորհուրդը, մինչդեռ դատարանի համակարգում այդ գործառույթը կատարում է ընդհանուր իրավասության կամ կարգապահական հարցերի տրիբունալը: Դատարանի համակարգում, որպես կանոն, արդարադատության նախարարությունը կամ գլխավոր դատախազն է կարգապահական հարցերի տրիբունալում դատավորի նկատմամբ հարուցում կարգապահական վարույթ: Խորհրդի համակարգում դատական խորհրդում վարույթ հարուցելու իրավասություն ունեցող անձանց կամ մարմինների խումբը շատ ավելի ընդգրկուն է: Դրանում ընդգրկվում են արդարադատության նախարարությունը, դատարանների նախագահները, վարույթի կողմերը, անհատները կամ փաստաբանները: Երկու համակարգերի դեպքում էլ դատավորի կողմից թույլ տրված խախտման մասին բողոքները կամ տեղեկությունները կարող են ներկայացվել իրավասու մարմիններ պաշտոնապես սահմանված կարգով կամ ոչ պաշտոնապես՝ առանց անձանց շրջանակի սահմանափակման:

16. Խորհրդի որոշ համակարգերում բողոքարկման ընթացակարգը ներառված է դատական խորհրդի լիազորությունների շրջանակում, իսկ այլ համակարգերում բողոքը ներկայացվում է առավել բարձր աստիճանի դատարան, որոշ դեպքերում՝ նույնիսկ սահմանադրական դատարան: Բազմաթիվ երկրներում դատարանի նախագահներին վերապահված է կարգապահական որոշումներ կայացնելու լիազորություն այնպիսի դեպքերում, երբ անհրաժեշտ է կիրառել զգուշացում կամ ոչ այնքան խիստ նկատողություն: Մի քանի երկրում կարգապահական վարույթներն իրականացնում են դատավորների կարգապահական հարցերով խորհրդարանական հանձնաժողովը, գլխավոր դատավորը, համապատասխանաբար վերաքննիչ դատարանի նախագահը կամ

կառավարության բարձրաստիճան պաշտոնատար անձանց կարգապահական հարցերով խորհուրդը: Մի քանի այլ երկրներում կարգապահական վարույթ կարող է հարուցել մարդու իրավունքների պաշտպանը կամ արդարադատության կանցլերը:

17. Երկրների գերակշիռ մասում գործում են կարգապահական վարույթում ներգրավված մարմինների, մասնավորապես՝ որոշում կայացնող մարմնի անկախության ու անաչառության պաշտպանության երաշխիքներ: Որոշ երկրներում նախատեսված են երաշխիքներ՝ ապահովելու համար, որ բոլոր մարմինները վարույթի հարուցումից հետո պահպանեն իրենց անկախությունը, այդ թվում՝ քննչական մարմինը եւ որոշում կայացնող մարմինը: Այլ երկրներում նշված են վարույթների քաղաքականացման կոնկրետ ձևերի դրս ելորման որոշ ռիսկեր: Սա վերաբերում է այն դեպքերին, երբ քննություն իրականացնող դատախազները գտնվում են արդարադատության նախարարության ենթակայության ներքո, երբ մի եւնույն անձը որպես դատական խորհրդի անդամ հարուցում է վարույթ եւ կայացնում է որոշում, կամ երբ դատական խորհրդի անդամները նշանակվում են խորհրդարանի կողմից: Համանման ռիսկ առկա է նա եւ այն դեպքում, երբ դատական խորհրդի անդամները նշանակվում են գործադիր իշխանության կողմից:

18. ԵԴԽԽ-ն ընդգծում է դատավորների կարգապահական պատասխանատվության առնչությամբ սահմանադրական կամ օրենսդրական մակարդակում կայուն երաշխիքներ ունենալու եւ գործնականում այդ երաշխիքներն իրականացնելու կար եւորությունը⁹: Այն ընդգծում է, որ պետք է պաշտպանել դատավորների անկախությունը դատավորների նկատմամբ կամայական եւ ոչ պատշաճ ձև եւով իրականացվող կարգապահական գործելակերպերից: Նյութաիրավական եւ ընթացակարգային նորմերը պետք է սահմանվեն օրենքով: Դատավորների կարգապահական պատասխանատվության

⁹ ԻԶԵԿ-ի Դատական համակարգի անկախության եւ անաչառության ամրապնդմանն ուղղված գործողությունների ծրագրի իրականացման գնահատում, 223-224-րդ պարբերություններ, տե՛ս նաև ավելի ընդհանուր առմամբ ԵԴԽԽ-ի թիվ 1 (2001) կարծիքը և թիվ 6 (2004) կարծիքը:

մասին օրենքների մշակման գործընթացում կար եւոր նշանակություն ունի դատավորների, այդ թվում՝ նրանց միավորումների¹⁰ հետ քննարկումների անցկացումը, եւ նրանց պետք է տրվի դատավորների կարգավիճակի հետ կապված հարցերին վերաբերող օրենսդրական ակտի նախագիծն ուսումնասիրելու եւ դրա վերաբերյալ մեկնաբանություններ անելու հնարավորություն¹¹:

19. Կարգապահական վարույթ հարուցելու եւ դրա շրջանակներում քննություն իրականացնելու համար պատասխանատու մարմինը չպետք է լինի այն նույն մարմինը, որը կայացնում է կարգապահական որոշում: Հանրության ներկայացուցչի կողմից բողոք ներկայացվելուց հետո այդ անձը չպետք է որ եւէ կարգավիճակով հանդես գա հետագա կարգապահական վարույթի ընթացքում¹²: ԵԴԽԽ-ն առաջարկում է, որ անդամ պետություններում գործի քննություն իրականացնող կոնկրետ մարմին կամ անձ, որն ընդունում է բողոքները, ստանում է դատավորի պարզաբանումները եւ դրանց հիման վրա դիտարկում է՝ արդյոք կան բավարար հիմքեր դատավորի նկատմամբ այդպիսի վարույթ հարուցելու համար, թե՛ ոչ: Քննչական մարմինը պետք է լինի քաղաքական ազդեցությունից զերծ: Որոշ իրավական համակարգերում, որտեղ արդարադատության իրականացումը գտնվում է արդարադատության նախարարության լիազորության ներքո, սա կարող է իրական սպառնալիք լինել այն դեպքում, երբ կարգապահական հարցերով դատախազները նշանակվում են կառավարության կամ կառավարության հետ փոխկապակցված մարմինների¹³ կողմից, եւ այն դեպքում, երբ նրանք համակարգային առումով գտնվում են գործադիր մարմնի ենթակայության ներքո, որը պատասխանատու է

¹⁰ ԵԴԽԽ-ի թիվ 18 (2015) կարծիք, 31-րդ պարբերություն:

¹¹ ԵԴԽԽ-ի թիվ 23 (2020) կարծիք, IX գլուխ, 7-րդ կետ:

¹² Սա չի վերաբերում որոշ անդամ պետություններում գործող՝ բողոքների ներկայացման համակարգերին, որտեղ, օրինակ, քաղաքացին կարող է բողոք ներկայացնել դատավորի վարքագծի վերաբերյալ, եթե ըստ այդ համակարգի՝ 1) բողոքը չի կարող վերաբերել գործով դատավորի կայացրած որոշմանը, 2) արդյունավետորեն և օպերատիվորեն անբարեխիղճ և մյուս անհիմն բողոքները մերժվում են, և 3) պատշաճ ձևով պաշտպանվում են դատավորի իրավունքները: Անբարեխիղճ և այլ անհիմն բողոքների համար տե՛ս ստորև՝ 32-րդ պարբերությունը:

¹³ Որոշ անդամ պետություններում նույնիսկ դատարանի նախագահը կարող է առնչություն ունենալ գործադիր իշխանության հետ:

արդարադատության իրականացման համար:

20. Դատավորը, որին ներկայացվել է կարգապահական մեղադրանք, պետք է իրավունք ունենա դիմելու անկախ տրիբունալի կամ մարմնի, որը ստեղծվել է օրենքի հիման վրա՝ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի համաձայն¹⁴: Չափազանց կարևոր է, որ այսպիսի կարգապահական վարույթներում բացառվի որոշում կայացնող մարմնի նկատմամբ կառավարության գործադիր կամ օրենսդիր ճյուղի ազդեցությունը¹⁵: Եթե որոշում կայացնող կարգապահական մարմինն ինքնին դատարանը չէ, ապա դրա անդամները պետք է բավարարեն անկախության եւ անաչառության ընդհանուր չափանիշները: Համապատասխան չափանիշներն ընդգրկում են նշանակման պատշաճ գործընթացը, պաշտոնավարման ֆիքսված ժամկետը, պաշտոնը պաշտպանելու երաշխիքները, միջամտություններից երաշխիքը, անկախության դրսեւորումը եւ կանխակալ կարծիքի առկայության դեպքում ինքնաբացարկ ներկայացնելու հնարավորությունը եւ այդ մարմնում դատավորի զգալի ներկայացվածությունը¹⁶: Հիշյալների առկայության պարագայում դատական խորհուրդը լավագույն տարբերակն է¹⁷:

21. Ինչ վերաբերում է նշանակման ընթացակարգին, ապա ԵԴԽԽ-ն

¹⁴ Տե՛ս նաև ՄԻԵԿ, *Պայակն ընդդեմ Լեհաստանի* [*Pajak v. Poland*], 2023 թվականի հոկտեմբերի 24, թիվ 25226/18, 25805/18, 8378/19, 43949/19, 167-200-րդ պարբերություններ, մասնավորապես՝ 194-195-րդ պարբերությունները, ՄԻԵԿ, *Բական ընդդեմ Հունգարիայի* [ՄՊ], թիվ 20261/12, 2016 թվականի հունիսի 23, 100-106-րդ պարբերությունները, տե՛ս նաև *Վիլհո Էսկելինենը և այլք ընդդեմ Ֆինլանդիայի* [*Vilho Eskelinen and Others v. Finland*], 2007 թվականի ապրիլի 19, թիվ 63235/00, 62-րդ պարբերություն, տե՛ս նաև CM/Rec(2010) 12 առաջարկությունը, 69-րդ պարբերություն:

¹⁵ Տե՛ս նաև ՄԻԵԿ, *Ռեչկովիչն ընդդեմ Լեհաստանի* [*Reczkowicz v. Poland*], 2021 թվականի հուլիսի 22, թիվ 43447/19, ՄԻԵԿ, *Տուլեյան ընդդեմ Լեհաստանի* [*Tuleya v. Poland*], 2023 թվականի հուլիսի 6, թիվ 21181/19, 51751/20, 340-րդ պարբերություն, ՄԻԵԿ, *Միրոսլավա Տոդորովան ընդդեմ Բուլղարիայի* [*Miroslava Todorova v. Bulgaria*], 2021 թվականի հոկտեմբերի 19, թիվ 40072/13: Տե՛ս նաև ԳԲԵԿՈ-ի Լեհաստանի մասին հատուկ զեկույցը (Կանոն 34), 59-րդ (iv) պարբերություն, ԳԲԵԿՈ-ի չորրորդ փուլի գնահատում. պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելումը. Լեհաստանի վերաբերյալ համապատասխանության միջանկյալ զեկույց, 2021 թվական, 73-րդ պարբերություն:

¹⁶ Տե՛ս նաև ՄԻԵԿ, *Դենիսովն ընդդեմ Ուկրաինայի* [ՄՊ] [*Denisov v. Ukraine* [GC]], 2018 թվականի սեպտեմբերի 25, թիվ 76639/11, 60-65-րդ պարբերություններ:

Տե՛ս նաև ՄԻԵԿ, *Դենիսով ընդդեմ Ուկրաինայի* [ՄՊ], 2018 թվականի սեպտեմբերի 25, թիվ 76639/11, 60-65-րդ պարբերություններ:

¹⁷ Վենետիկի հանձնաժողովի «Զեկույց դատական համակարգի անկախության մասին: Մաս I. դատավորների անկախությունը», ընդունված Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 82-րդ լիազումար նիստի ընթացքում (Վենետիկ, 2010 թվականի մարտի 12-13), 43-րդ պարբերություն:

հաստատում է իր այն դիրքորոշումը, որ դատարաններ չհանդիսացող կարգապահական մարմինների անդամները պետք է նշանակվեն անկախ մարմնի կողմից, որը հիմնականում կազմված է այլ դատավորների կողմից նշանակված դատավորներից¹⁸:

22. Որոշում կայացնող մարմնի առնչությամբ ԵԴԽԽ-ն կողմ է նրան, որ արդարադատության նախարարությունը եւ (կամ) գործադիր մարմնի այլ անդամներ չպետք է լինեն դատական խորհրդի անդամներ այն դեպքում, երբ այն գործում է որպես կարգապահական մարմին, մասնավորապես, եթե այն նա եւ օժտված է դատավորի նկատմամբ վարույթ հարուցելու լիազորությամբ¹⁹: Վերջինս խնդիր է ոչ միայն դատական համակարգի անկախության ու անաչառության, այլ եւ իշխանությունների բաժանման սահմանադրական սկզբունքի համար: Կարգապահական մարմնի անդամները չպետք է ներգրավվեն կարգապահական գործի նախաքննությանը, քանի որ գործառույթների այդ կրկնությունը կարող է արդարացիորեն կասկածի տակ դնել այդ անդամների անաչառությունը²⁰: Դատախազության ներկայացուցիչները, այսինքն՝ գլխավոր դատախազը եւ դատախազության մարմինների կողմից պատվիրակված ներկայացուցիչները, որոնք պատասխանատու են կարգապահական վարույթի քննության փուլի իրականացման համար, չպետք է ներառվեն դատավորների հարցերով կարգապահական մարմնի կազմում: Դրա հետ եւանքով մի կողմից կմիաձուլվեն քննչական եւ մեղադրող, իսկ մյուս կողմից՝ դատական գործառույթները²¹:

23. Պետք է գործի վերանայման մարմին/տրիբունալ, որն ունի բողոքները

¹⁸ Տե՛ս նաև ԵԴԽԽ-ի թիվ 3 (2002) կարծիքը, 77-րդ պարբերություն, ՄԻԵԴ, *Դենիսովն ընդդեմ Ուկրաինայի* [ՄՊ] [*Denisov v. Ukraine* [GC]], 2018 թվականի սեպտեմբերի 25, թիվ 76639/11, 68-72-րդ պարբերություններ, ՄԻԵԴ, *Վոլկովն ընդդեմ Ուկրաինայի* [*Volkov v. Ukraine*], 2013 թվականի հունվարի 9, թիվ 21722/11, 112-րդ պարբերություն:

¹⁹ Տե՛ս նաև *Պայակն ընդդեմ Լեհաստանի*, 2023 թվականի հոկտեմբերի 24, թիվ 25226/18, 25805/18, 8378/19, 43949/19:

²⁰ Տե՛ս նաև ՄԻԵԴ, *Դենիսովն ընդդեմ Ուկրաինայի* [ՄՊ], 2018 թվականի սեպտեմբերի 25, թիվ 76639/11, 68-72-րդ պարբերություններ, ՄԻԵԴ, *Վոլկովն ընդդեմ Ուկրաինայի*, 2013 թվականի հունվարի 9, թիվ 21722/11, 115-րդ պարբերություն: Վենետիկի հանձնաժողովի CDL-AD(2015)042 փաստաթուղթ, 73-րդ պարբերություն:

²¹ ՄԻԵԴ, *Դենիսովն ընդդեմ Ուկրաինայի* [ՄՊ], 2018 թվականի սեպտեմբերի 25, թիվ 76639/11, 68-72-րդ պարբերություններ, ՄԻԵԴ, *Վոլկովն ընդդեմ Ուկրաինայի*, 2013 թվականի հունվարի 9, թիվ 21722/11, 114-րդ պարբերություն:

լսելու լիարժեք իրավասություն²², այսինքն՝ այն կարող է վերանայել թե՛ ընթացակարգը եւ թե՛ ըստ էության որոշումը, ինչպես նա եւ պետք է լինի անկախ եւ անաչառ: Վերանայման մարմինը պետք է ունենա կարգապահական որոշումները բեկանելու իրավասություն եւ ըստ անհրաժեշտության՝ ձեռնարկի իրավիճակի շտկմանն ուղղված միջոցներ: Վերանայման մարմնի կողմից նախորդ որոշումը միայն անօրինական ճանաչելը բավարար չէ²³: Կար եւոր է, որ վերանայման մարմնի կազմում չներառվեն այնպիսի անդամներ, որոնք նա եւ սկզբնական կարգապահական վարույթն ընդունող մարմնի անդամներն են եղել²⁴:

24. Այն անդամ պետություններում, որտեղ առկա են ոչ դատավոր անդամներ, անդամների մեծամասնությունը պետք է լինի դատական համակարգի ներկայացուցիչներ:

V. Կարգապահական պատասխանատվության հիմքերը

25. ԵԴԽԽ-ի անդամ պետությունների մեծ մասում կարգապահական պատասխանատվության հիմքերը սահմանված են օրենքով եւ ներառում են դատական եւ արտադատական բնույթի խախտումները: Բովանդակությունը եւ ձեւակերպումը կարող են տարբեր լինել: Հաշվի առնելով մշակութային բազմազանությունը, որն անդրադառնում է հանրության՝ դատավորների վարքագծի հետ կապված ակնկալիքների վրա, կարգապահական պատասխանատվության հիմքերը տարբեր են, մասնավորապես՝ դատավորների անձնական վարքագծի առնչությամբ: Թե եւ մեկ երկրում դատավորները կարող են արտահայտել քաղաքականապես վիճելի կարծիքներ, մեկ այլ երկրում նրանք չեն

²² Կարծիքում այս մասով հղում է կատարվում ՄԻԵԴ-ի *Ռամոնշ Նունեշ դե Կարվալյու է Սան ընդդեմ Պորտուգալիայի* [ՄՊ] [*Ramos Nunes de Carvalho e sa v. Portugal* [GC]] գործին, 2018 թվականի նոյեմբերի 6, 55391/13 57728/13 74041/13, 176-րդ և հաջորդող պարբերությունները:

²³ ՄԻԵԴ, *Ղենիսովն ընդդեմ Ուկրաինայի* [ՄՊ], 2018 թվականի սեպտեմբերի 25, թիվ 76639/11, 74-րդ պարբերություն, ՄԻԵԴ, *Վոլկովն ընդդեմ Ուկրաինայի*, 2013 թվականի հունվարի 9, թիվ 21722/11, 124-129-րդ պարբերություններ:

²⁴ ՄԻԵԴ, *Կոզանն ընդդեմ Թուրքիայի* [*Kozan v. Turkey*], 2022 թվականի մարտի 1, թիվ 16695/19, 79-րդ պարբերություն:

կարող դա անել: Որոշ երկրներում դատավորների պատասխանատվության հիմքերը նշվում են խիստ սպառիչ ցանկում, իսկ այլ երկրներում դրանք ամրագրված են առավել ազարտ ձևակերպումներով:

26. Դատավորներն ունեն ազատորեն արտահայտվելու իրավունք՝ համաձայն ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի, ինչը նա էլ սահմանված է Թիվ 25 (2022) կարծիքում: ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածով նախատեսված իրենց իրավունքների օրինական իրականացումը չպետք է առաջացնի կարգապահական պատասխանատվություն²⁵: Ազատորեն արտահայտվելու իրավունքը ներառում է դատավորների՝ իրենց կամ իրենց գործընկերների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի մասին հրապարակայնորեն խոսելու իրավունքը: Կարգապահական պատասխանատվության հիմքերը չպետք է խախտեն նա էլ դատավորների՝ ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածով սահմանված՝ անձնական եւ ընտանեկան կյանքի իրավունքը:

27. Յուրաքանչյուր անդամ պետությունում օրենքով պետք է հստակ²⁶ եւ հնարավորինս կոնկրետ եզրույթներով²⁷ սահմանվեն այն հիմքերը, որոնց հիման վրա դատավորների նկատմամբ կարող է հարուցվել կարգապահական վարույթ: Հետադարձ ուժով կիրառելու հնարավորությամբ հատուկ հիմքերի սահմանումը պետք է բացառել: Երկիմաստ դրույթները (օրինակ՝ «երդման խախտում» կամ «էթիկայի նորմերին չհամապատասխանող վարքագիծ») չափազանց լայն մեկնաբանության եւ չարաշահման հնարավորություն են ստեղծում, որը կարող է վտանգավոր լինել դատավորների անկախության համար²⁸: Կարգապահական որոշումների կանոնավոր հրապարակումը կարող է օգնել օրենսդրական դրույթների պարզաբանման հարցում²⁹:

28. Դատավորի որոշումը, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունը, փաստերի

²⁵ ԵԴԴԽ-ի թիվ 25 (2022) կարծիք, 35-րդ պարբերությունը և առաջարկությունները:

²⁶ Վենետիկի հանձնաժողովի CDL-AD(2016)009 փաստաթուղթ, 34-րդ պարբերություն:

²⁷ ԵԴԴԽ-ի թիվ 3 (2002) կարծիք, 77-րդ պարբերություն:

²⁸ Վենետիկի հանձնաժողովի CDL-AD(2016)013 փաստաթուղթ, 24-27-րդ պարբերություն, CDL-AD(2018)032 փաստաթուղթ, 78-րդ պարբերություն:

²⁹ Վենետիկի հանձնաժողովի CDL-AD(2016)013 փաստաթուղթ, 27-րդ պարբերություն:

գնահատումը կամ ապացույցների ուսումնասիրությունը եւ (կամ) ձեւավորված նախադեպային իրավունքից շեղումը չպետք է հանգեցնի կարգապահական պատասխանատվության՝ բացառությամբ հանցավոր մտադրության, պարտականությունները դիտավորությամբ չկատարելու կամ լուրջ խախտում կատարելու դեպքերի³⁰։ Համանման ձեւով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի (ԵՄԳՊ) 267-րդ հոդվածի համաձայն նախնական ռեֆերենտային ընթացակարգ սկսելը եւ ՄԻԵԴ-ի կողմից խորհրդատվական կարծիք տրամադրելու խնդրանք ներկայացնելը չպետք է դատավորի համար առաջացնի պատասխանատվություն։ Ցանկացած արարք, որն ազդում է Եվրոպական միության արդարադատության դատարանի (ԵՄԱԴ) մեկնաբանությանը դիմելու հնարավորության վրա, համարվում է օրենքի գերակայության նկատմամբ լուրջ ոտնձգություն։ Դատավորների կարգապահական պատասխանատվության հիմքերը պետք է վերաբերեն դատավորի այն վարքագծին, որը հակասում է Կոնվենցիայում ամրագրված որ եւէ հիմնական արժեքի՝ անկախություն, անաչառություն, ազնվություն, բարեվարքություն, հավասարություն, խտրականության բացառում, կոմպետենտություն եւ բարեխղճություն³¹։ ԵԴԽԽ-ն նախազգուշացնում է դատական համակարգի հեղինակությունը չօգտագործել որպես դատավորների կարգապահական պատասխանատվության հիմքերի հիմնավորում՝ բացառությամբ դատական համակարգի հեղինակությանը եւ դրա նկատմամբ հանրային վստահությանն ուղղակիորեն վերաբերող դեպքերի։

29. ԵԴԽԽ-ն ընդգծում է այն սահմանային չափանիշի կար եւորությունը, որով տարբերակվում է տույժերի կիրառումը ենթադրաբար հիմնավորող անբարեխիղճ վարքագիծը հակաիրավական վարքագծի մյուս դրս եւորումներից։

³⁰ CM/Rec(2010)12 առաջարկություն, 66-րդ պարբերություն, ԵԴԽԽ-ի թիվ 3 (2002) կարծիք, 60-րդ պարբերություն։ Հանցավոր դիտավորությունը, դիտավորությամբ պարտականությունները չկատարելը և լուրջ խախտումները որոշելիս պետք է հաշվի առնվեն առողջական վիճակը կամ այլ հատուկ հանգամանքներ։

³¹ Տե՛ս նաև Դատավորների վարքագծի Բանգալորյան սկզբունքները (2002 թվական), ԵԴԽԽ-ի թիվ 21 (2018) կարծիքը։ Պետք է նշել, որ գործերի կանոնավոր կուտակումը չպետք է մեկնաբանել որպես դատավորների կողմից թույլ տրված լուրջ խախտում։

30. Էթիկայի նորմերը պետք է հստակ տարբերակել կարգապահական տույժի կիրառումը հիմնավորող հակաիրավական վարքագծից: Քանի որ էթիկայի կանոնների նպատակը տարբերվում է կարգապահական վարույթի նպատակներից, էթիկայի կանոնները չպետք է օգտագործվեն դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար: Այն դեպքում, երբ էթիկայի նորմերը եւ մասնագիտական վարքագծի կանոնները համընկնում են արտադատական վարքագծի մասով, որը հանգեցնում է դատական համակարգի նկատմամբ հանրային վստահության նվազեցման, սահմանային չափանիշն օգնում է տարբերակել էթիկայի նորմերին չհամապատասխանող վարքագիծը կարգապահական պատասխանատվության ենթակա վարքագծից:

VI. Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթի ընթացակարգային երաշխիքները

31. Ընթացակարգը կարող է պայմանականորեն բաժանվել չորս փուլի՝ տեղեկատվության/բողոքների ներկայացման փուլ, քննության փուլ, արձանագրության կազմման/վարույթի հարուցման փուլ եւ որոշման կայացման փուլ: Շատ երկրներում դատավորները տեղեկացվում են վարույթի առաջին կամ երկրորդ փուլի ընթացքում: Միայն որոշ երկրներում է գործում բողոքների ներկայացման ֆորմալ մեխանիզմ: Անդամ պետությունների մեծ մասում վարույթի մնացած մասը կարգավորվում է ֆորմալ ձևով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարույթի իրականացման կարգը տարբերվում է, վարույթի չորս փուլերում ներգրավված են տարբեր մարմիններ: Որոշ երկրներում դատական խորհրդի կողմից կազմված քննչական խումբն իրականացնում է քննության փուլը, որն ավարտելիս կազմվում է արձանագրություն, որի հիման վրա էլ դատական խորհուրդը կարգապահական բողոքի վերաբերյալ որոշում է կայացնում: Այլ երկրներում դատախազության կողմից իրականացվող քննության արդյունքում առաջադրվում է մեղադրանք, որի վերաբերյալ որոշում է կայացնում դատարանը: Թե եւ որոշ երկրներում կարգապահական վարույթն իրականացվում է

քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով, այլ երկրներում դրանք իրականացվում են քրեական կամ վարչական օրենսդրությամբ սահմանված կարգով: Միայն որոշ երկրներում է կարգապահական գործերի վերաբերյալ որոշում կայացվում հանրային լսում անցկացնելուց հետո: Բազմաթիվ երկրներում, որտեղ վերջնական որոշումները հրապարակվում են, դրանք անուններ չեն պարունակում:

32. Կար եւոր է խուսափել կարգապահական վարույթի ցանկացած չարաշահումից: Այդ իսկ պատճառով կարգապահական վարույթի հարուցման հիմքում պետք է ընկած լինեն ծանրակշիռ իրավական հիմքեր: Հիմքերը պետք է բավարարեն օրինականության չափանիշները, այսինքն՝ դրանք պետք է լինեն հստակ սահմանված, ունենան ճշգրիտ եւ կանխատեսելի կիրառություն, որպեսզի դատավորները կարողանան հնարավորինս կանխատեսել այն կարգապահական հետ եւանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ արարքը³²: Անբարեխիղճ բողոքները կամ միայն դատավորի որոշմանը կամ նրա կողմից վարույթի իրականացմանը վերաբերող բողոքները (այսինքն՝ սխալի առկայություն վճռում, ընթացակարգում, նյութական իրավունքում) պետք է անընդունելի լինելու հիմքով մերժվեն եւ արագ կարճվեն: Անդամ պետությունները պետք է հիշեն, որ որպես կարգապահական վարույթ հարուցելու միջոց բողոքների ներկայացման թույլատրումը կարող է հանգեցնել բողոքների կուտակման, ինչը բացասական ազդեցություն կունենա բողոքների ժամանակին քննության վրա³³: Այսպիսի դեպքերում ԵԴԽԽ-ն խորհուրդ է տալիս անդամ պետություններին ձեռավորել գոտիչ համակարգ՝ բողոքները քննելու համար:

33. ԵԴԽԽ-ն խորհուրդ է տալիս կարգապահական վարույթների համար

³² ՄԻԵԴ, *Խլայֆիան և այլք ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] [*Khlaifia and Others v. Italy* [GC]], 2016 թվականի դեկտեմբերի 15, 16483/12, 92-րդ պարբերություն, Ջ.Ն.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության [*J.N. v. The United Kingdom*], 2016 թվականի մայիսի 19, 37289/12, 77-րդ պարբերություն, *Դել Ռիո Պրադան ընդդեմ Իսպանիայի* [ՄՊ] [*Del Rio Prada v. Spain* [GC]], 2013 թվականի հոկտեմբերի 21, 42750/09, 125-րդ պարբերություն, *Մեդվեդևը և այլք ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ] [*Medvedyev and Others v. France* [GC]], 2010 թվականի մարտի 29, 3394/03, 80-րդ պարբերություն:

³³ Տե՛ս Դատական համակարգի նվազագույն չափանիշները V. Կարգապահական վարույթը և դատավորների պատասխանատվությունը, ԴԽԵՅ-ի 2014-2015 թվականների զեկույց, էջ 25:

սահմանել հստակ ժամանակային սահմանափակումներ: Ինչ վերաբերում է դատավորի պաշտոնին, այս իրավական որոշակիությամբ ամրապնդվում է դատավորի անկախությունը:

34. ԵԴԽԽ-ն ընդգծում է, որ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով ամրագրված բոլոր ընդհանուր ընթացակարգային երաշխիքները կիրառվում են դատավորների նկատմամբ իրականացվող կարգապահական վարույթների նկատմամբ³⁴: Անդամ պետությունները պետք է օրենքով սահմանեն հստակ ընթացակարգային կանոններ, որոնք կիրառվում են դատավորների կարգապահական վարույթների նկատմամբ:

35. ԵԴԽԽ-ն ընդգծում է, որ դատավորները պետք է հնարավորություն ունենան արդյունավետորեն մասնակցելու իրենց նկատմամբ հարուցված կարգապահական վարույթներին: Դատավորներն ունեն տեղեկացված եւ լսելի լինելու, իրենց պաշտպանությունն իրականացնելու իրավունք: ԵԴԽԽ-ն անդամ պետություններին կոչ է անում ապահովել, որ մրցակցային դատավարության ընթացքում առկա լինի կողմերի իրավահավասարություն: Այս նպատակով դատավորը պետք է ունենա իրավական ներկայացուցչության իրավունք: Եթե լսումների ժամանակ վկայի ցուցմունքը թույլատրելի է, ապա երկու կողմերի վկաներին պետք է ցուցաբերվի հավասար վերաբերմունք³⁵: Ավելին, դատավորը կարող է հակաիրավական վարքագծի համար պատասխանատվության ենթարկվել միայն, եթե այդ վարքագիծն ապացուցված է:

36. Դատական մարմնում վարույթի հրապարակային բնույթը դատավարության մասնակիցներին պաշտպանում է արդարադատության գաղտնի՝ առանց հանրային հսկողության իրականացումից³⁶: Ուստի ԵԴԽԽ-ն

³⁴ Տե՛ս նաև *Բական ընդդեմ Հունգարիայի* [ՄՊ], 2016 թվականի հունիսի 23, թիվ 20261/12, 100-106-րդ պարբերություններ, տե՛ս նաև *Վիլհո Էսկելինենի և այլոց* գործը՝ վերնում հիշատակված, § 62:

³⁵ ՄԻԵԴ, *Անկերլն ընդդեմ Շվեյցարիայի* [Ankerl v. Switzerland], 1996 թվականի հոկտեմբերի 23, թիվ 17748/91, 38-րդ պարբերություն, տե՛ս, ի հակադրություն, *Դոմբո Բեհեր Բի.Վի. -ն ընդդեմ Նիդերլանդների* [Dombo Beheer B.V. v. the Netherlands], 1993 թվականի հոկտեմբերի 27, թիվ 14448/88, 35-րդ պարբերություն:

³⁶ ՄԻԵԴ, *Ֆազլիյսկին ընդդեմ Բուլղարիայի* [Fazliyski v. Bulgaria], 2010 թվականի հունիսի 1, թիվ

ընդգծում է, որ թե եւ քննությունները պետք է լինեն գաղտնի, լսումները պետք է անցկացվեն դռնբաց, եթե առկա չեն դռնփակ լսումներ անցկացնելու առնչությամբ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով սահմանված հիմքերը³⁷: Կարգապահական որոշումները պետք է լինեն պատշաճ ձևով հիմնավորված, այսինքն՝ հաշվի առնեն քննություն իրականացնող մարմնի եւ դատավորի կողմից ներկայացված բոլոր համապատասխան հանգամանքները³⁸: Դրանք պետք է հրապարակավ հայտարարվեն եւ հրապարակվեն: Հրապարակելիս անունները կարող են չնշվել: Որոշումներին զուգահեռ կարող են նա եւ տրամադրվել կարգապահական որոշումների վերաբերյալ վիճակագրական տվյալներ³⁹: Վարույթների եւ որոշումների հրապարակային բնույթը կար եւոր է կարգապահական վարույթի թափանցիկության եւ արդարադատության պատշաճ իրականացման նկատմամբ հանրային վստահությունն ամրապնդելու համար:

37. Անդամ պետությունները պետք է վարույթներն իրականացնեն ողջամիտ ժամկետում: Սա նշանակում է, որ արդարադատությունը պետք է իրականացվի առանց ձգձգումների, քանի որ վերջիններս կարող են վտանգել դրա արդյունավետությունը եւ հավաստիությունը⁴⁰: Ողջամիտ ժամկետը կախված է գործի բարդությունից եւ բոլոր համապատասխան հանգամանքներից, ինչպես նա եւ բողոքաբերի համար հարցի կար եւորությունից⁴¹: Դատավորի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը պետք է ավարտվի ժամանակին: Չափազանց երկար ձգձգումների դեպքում դատավորի համար պետք է հասանելի լինի վարույթը կարճելու միջնորդություն ներկայացնելու ընթացակարգ:

40908/05, 69-րդ պարբերություն:

³⁷ ՄԻԵԿ, *Ռամուշ Նունեշ դե Կարվալյու է Սան ընդդեմ Պորտուգալիայի* [ՄՊ], 2018 թվականի նոյեմբերի 6, թիվ 55391/13, 57728/13, 74041/13, 208-րդ պարբերություն:

³⁸ Տե՛ս նաև *Սիմիչն ընդդեմ Բոսնիայի և Հերցեգովինայի* (որոշում) [*Simic v. Bosnia-Herzegovina* (dec.)], 2016 թվականի նոյեմբերի 15, թիվ 75255/10, 35-36-րդ պարբերություններ:

³⁹ Տե՛ս նաև ԵԴԴԽ-ի թիվ 3 (2002) կարծիքը, 15-րդ և 23-րդ պարբերություններ:

⁴⁰ ՄԻԵԿ, *Սկորդինոն ընդդեմ Իտալիայի* (թիվ 1) [ՄՊ] [*Scordino v. Italy* (no. 1) [GC]], 2006 թվականի մարտի 29, թիվ 36813/97, 224-րդ պարբերություն:

⁴¹ ՄԻԵԿ, *Կոմինգերսոլ Էս.Ա.-ն ընդդեմ Պորտուգալիայի* [ՄՊ] [*Comingersoll S.A. v. Portugal* [GC]], 2000 թվականի ապրիլի 6, թիվ 35382/97, ՄԻԵԿ, *Ֆրիդլենդերն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ]

[*Frydlender v. France* [GC]], 2000 թվականի հունիսի 27, թիվ 30979/96, 43-րդ պարբերություն,

ՄԻԵԿ, *Սուրմելին ընդդեմ Գերմանիայի* [ՄՊ] [*Surmeli v. Germany* [GC]], 2006 թվականի հունիսի 8, թիվ 75529/01, 128-րդ պարբերություն:

38. ԵԴԽԽ-ն վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ դատավորներին պետք է վերապահել կարգապահական որոշումները եւ կարգապահական տույժերը բողոքարկելու իրավունք⁴²:

VII. Դատավորների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը

39. Բազմաթիվ պետություններում գոյություն ունի դատավորների համար նախատեսված հնարավոր կարգապահական տույժերի սպառիչ ցանկ: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր դեպքում տույժերի կիրառման առումով առկա է մեկնաբանության որոշակի ազատություն: Բոլոր պետություններում համապատասխան տույժը որոշելիս կիրառվում է համաչափության սկզբունքը: Տույժերը կարող են ներառել նախազգուշացումը, նկատողությունը, համապատասխան տուգանքը, այլ պաշտոնում նշանակելը, ծառայողական լիազորությունների կասեցումը, վաղաժամկետ (հարկադիր) կենսաթոշակի անցնելը եւ պաշտոնից ազատումը:

40. ԵԴԽԽ-ն վերահաստատում է, որ կարգապահական տույժերը պետք է հստակ սահմանված լինեն օրենքով, լինեն հեշտ հասանելի եւ ներկայացվեն սպառիչ ցանկի ձևով⁴³: Համաչափության սկզբունքը պետք է ընկած լինի որոշման հիմքում⁴⁴: Դրա համար անհրաժեշտ է հավասարակշռություն հաստատել մի կողմից իրավախախտման ծանրության եւ դրա հետ եւանքների, իսկ մյուս կողմից՝ տույժի տեսակի եւ խստության միջև եւ⁴⁵: Դատավորին պաշտոնից ազատելու մասին որոշումը պետք է կայացնել միայն որպես վերջին միջոց՝ բացառիկ լուրջ դեպքերում⁴⁶: Դատավորների տեղափոխումը եւ (կամ) փոխադրումը (նույնիսկ

⁴² CM/Rec(2010)12 առաջարկություն, 69-րդ պարբերություն, տե՛ս նաև ԳԲԵԿՈ-ի չորրորդ փուլի գնահատում. պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելումը. եզրակացություններ և միտումներ (2017 թվական), էջ 18:

⁴³ ԵԴԽԽ-ի թիվ 3 (2002) կարծիք, 77-րդ պարբերություն, տե՛ս նաև համաչափության սկզբունքի կիրառման առնչությամբ CM/Rec(2010)12 առաջարկությունը, 69-րդ պարբերություն, Վենետիկի հանձնաժողովի CDL-AD(2014)039 փաստաթուղթ, 72-րդ պարբերություն:

⁴⁴ Նույն տեղում

⁴⁵ Վենետիկի հանձնաժողովի CDL-AD(2014)039 փաստաթուղթ, 72-րդ պարբերություն:

⁴⁶ Տե՛ս նաև Վենետիկի հանձնաժողովի CDL-AD(2015)042 փաստաթուղթը, 113-րդ պարբերություն, ԳԲԵԿՈ-ի չորրորդ փուլի գնահատում. պատգամավորների, դատավորների և դատախազների

ժամանակավոր հիմունքներով) կամ պաշտոնի իջեցումը կարող է միայն հիմնավորված լինել դատավորի կողմից կատարված լուրջ խախտման դեպքում⁴⁷։ ԵԴԽ-ն խորհուրդ է տալիս որպես կարգապահական տույժ չկիրառել աշխատավարձի նվազեցումը, քանի որ դատավորները պետք է նույն աշխատանքի համար ստանան հավասարաչափ վարձատրություն։

41. Դատավորի պատասխանատվությունը հստակ որոշելու համար պետք է հաշվի առնել տվյալ գործի բոլոր ծանրացնող եւ մեղմացնող հանգամանքները՝ հաշվի առնելով կարգապահական իրավախախտման կատարման կոնկրետ հանգամանքները։

42. Բոլոր դեպքերում տույժի համարժեքությունը գնահատելիս պետք է հաշվի առնել այն հնարավոր բացասական ազդեցությունը, որ կոնկրետ տույժը կարող է թողնել առանձին դատավորի եւ մյուս դատավորների վրա⁴⁸։

43. ԵԴԽ-ն ընդգծում է, որ կոնկրետ միջոցառումները, որոնք ենթադրաբար ունեն կամ կարող են ունենալ նույն ազդեցությունը, ինչ կարգապահական տույժերը, պետք է դիտարկվեն որպես այդպիսին՝ դատավորների համար սահմանված բոլոր իրավունքներով եւ ընթացակարգային երաշխիքներով⁴⁹։ Սա նա

շրջանում կոռուպցիայի կանխարգելումը. եզրակացություններ և միտումներ (2017 թվական), էջ 18։

⁴⁷ Տե՛ս նաև ԱԱԵՀ-ի Եվրոպական դատական համակարգերի գնահատման զեկույցը, 2022 թվականի գնահատման փուլ (2020 թվականի տվյալներ), էջ 50։ Դատավորի անփոխարինելիությունը չի նշանակում, որ դատավորին չի կարելի տալ այլ հանձնարարություն։ Անփոխարինելիությունը դատավորների անկախության ապահովման կարևորագույն տարրն է. ՄԻԵԴ, *Բական ընդդեմ Հունգարիայի* [ՄՊ], 2016 թվականի հունիսի 23, թիվ 20261/12, 172-րդ պարբերություն, ԵԴԽ-ի թիվ 1 (2001) կարծիք, 57-59-րդ պարբերություններ։

⁴⁸ Տե՛ս նաև ՄԻԵԴ, *Բական ընդդեմ Հունգարիայի* [ՄՊ], 2016 թվականի հունիսի 23, թիվ 20261/12, 173-րդ պարբերություն, *Ջուրեկն ընդդեմ Լեհաստանի* [Zurek v. Poland], 2022 թվականի հունիսի 16, 39650/18, 227-րդ պարբերություն, *Կոզանն ընդդեմ Թուրքիայի*, 2022 թվականի մարտի 1, թիվ 16695/19, 68-րդ պարբերություն, *Սարիսու Փեհլիվանն ընդդեմ Թուրքիայի* [Sarısı Pehlivan v. Türkiye], 2023 թվականի հունիսի 6, թիվ 63029/19, 48-րդ պարբերություն։

⁴⁹ Սա վերաբերում է, օրինակ, այն դեպքերին, երբ դատավորների կենսաթոշակի անցնելու տարիքն իջեցվում է, և արդարադատության նախարարությունը կամ դրա քաղաքական հսկողության ներքո գտնվող մարմինը լիազորված է որոշելու, թե արդյոք այն դատավորի պաշտոնավարման ժամկետը, որի համար սահմանված է եղել կենսաթոշակի անցնելու առավել բարձր տարիք, նոր օրենքով «երկարաձգվում է» մինչև սկզբնական պաշտոնավարման ժամկետը, թե՛ ոչ։ Տե՛ս ՄԻԵԴ, *Պայակն ընդդեմ Լեհաստանի*, 2023 թվականի հոկտեմբերի 24, թիվ 25226/18, 25805/18, 8378/19, 43949/19, 167-200-րդ պարբերություններ։

եւ վերաբերում է դատավորին պատասխանատվության ենթարկելու համար նախատեսված ցանկացած միջոցի՝ անկախ դրա ձևից:

VIII. Առաջարկություններ

1. Դատավորներն իրենց սահմանադրական դերը կատարելու համար պետք է իրենց պարտականությունները կատարեն մասնագիտական վարքագծի բարձրագույն չափանիշներին համապատասխան: Կարգապահական պատասխանատվությունը դատավորների կողմից մասնագիտական վարքագծի չափանիշների պահպանումն ապահովելու միջոց է:

2. Կարգապահական պատասխանատվությունը չպետք է խաթարի դատավորների անկախությունը:

3. Դատավորների կարգապահական պատասխանատվությունը կարելու է օրենքի գերակայության սկզբունքին համապատասխան պատշաճ արդարադատություն իրականացնելու համար եւ անհրաժեշտ է դատական համակարգի նկատմամբ վստահությունը պահպանելու համար:

4. Անդամ պետությունները պետք է սահմանադրական կամ օրենսդրական մակարդակում սահմանեն դատավորների կարգապահական պատասխանատվության առնչությամբ կայուն երաշխիքներ եւ գործնականում իրականացնեն դրանք:

5. Կարգապահական վարույթին ներգրավված ընթացակարգային մարմինները պետք է պահպանեն իշխանությունների բաժանման եւ արդարադատության պատշաճ իրականացման սկզբունքը: Կարգապահական օրենքների եւ կարգավորումների վերաբերյալ պետք է խորհրդակցություններ անցկացնել դատավորների եւ նրանց միավորումների հետ:

6. Կարգապահական վարույթ հարուցելու եւ դրա շրջանակներում

քննություն իրականացնելու համար պատասխանատու մարմինը չպետք է լինի այն նույն մարմինը, որը կայացնում է կարգապահական որոշում: Անդամ պետություններում պետք է գործի քննություն իրականացնող կոնկրետ մարմին կամ անձ, որն ընդունում է բողոքները, ստանում է դատավորի պարզաբանումները եւ դրանց հիմա վրա դիտարկում է՝ արդյոք կան բավարար հիմքեր դատավորի նկատմամբ այդպիսի վարույթ հարուցելու համար, թե՛ ոչ:

7. Դատավորները, որոնց ներկայացվել է կարգապահական մեղադրանք, պետք է իրավունք ունենան դիմելու անկախ տրիբունալի կամ մարմնի, որը ստեղծվել է օրենքի հիման վրա՝ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի համաձայն:

8. Պետք է գործի անկախ եւ անաչառ վերանայման մարմին/տրիբունալ, որն իրավասու է բեկանելու կարգապահական որոշումները եւ ըստ անհրաժեշտության ձեռնարկելու իրավիճակի շտկմանն ուղղված միջոցներ, օրինակ՝ նախկինում զբաղեցրած պաշտոնում անմիջապես վերականգնելը:

9. Կարգապահական պատասխանատվության շրջանակը պետք է լինի հստակ սահմանված՝ օրենքի գերակայության սկզբունքին համապատասխանությունն ապահովելու համար: Օրենքում պետք է հստակ եւ հնարավորինս կոնկրետ եզրույթներով սահմանվեն այն հիմքերը, որոնց հիման վրա դատավորների նկատմամբ կարող է հարուցվել կարգապահական վարույթ:

10. Դատավորների՝ օրենքով սահմանված իրավունքների իրականացումը չպետք է առաջացնի կարգապահական պատասխանատվություն:

11. Դատավորների կարգապահական պատասխանատվության հիմքերը պետք է անքակտելիորեն կապված լինեն դատական համակարգի սահմանադրական դերի հետ: Դա ներառում է անհրաժեշտություն՝ ապահովելու, որ դատավորները հանդես գան որպես անկախ եւ անաչառ արբիտրներ, որոնք պահպանում են օրենքի գերակայության սկզբունքը, ինչպես նա եւ նրանք ընդհանուր առմամբ նպաստեն արդարադատության իրականացման համակարգի պատշաճ գործունեությանը:

12. Դատավորի որոշումը, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունը, փաստերի գնահատումը կամ ապացույցների ուսումնասիրությունը եւ (կամ) ձեւավորված նախադեպային իրավունքից շեղումը չպետք է հանգեցնի կարգապահական պատասխանատվության՝ բացառությամբ հանցավոր մտադրության, պարտականությունները դիտավորությամբ չկատարելու կամ լուրջ խախտում կատարելու դեպքերի: «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի (ԵՄԳՊ) 267-րդ հոդվածի համաձայն նախնական ռեֆերենտային ընթացակարգ սկսելը եւ ՄԻԵԴ-ի կողմից խորհրդատվական կարծիք տրամադրելու խնդրանք ներկայացնելը չպետք է երբ եւէ դատավորի համար առաջացնի պատասխանատվություն:

13. Պետք է սահմանվի սահմանային չափանիշ՝ կարգապահական տույժերի կիրառումը ենթադրաբար հիմնավորող անբարեխիղճ վարքագիծը հակաիրավական վարքագծի մյուս դրս եւորումներից տարբերակելու համար:

14. Էթիկայի նորմերը պետք է հստակ տարբերակել հակաիրավական վարքագծից, որով հիմնավորվում է կարգապահական տույժի կիրառումը:

15. Անդամ պետությունները պետք է օրենքով սահմանեն հստակ ընթացակարգային կանոններ, որոնք կիրառվում են դատավորների կարգապահական վարույթների նկատմամբ: Բողոքները քննելու համար պետք է ձեւավորել զտիչ համակարգ՝ ապահովելով անբարեխիղճ կամ անհիմն պահանջների օպերատիվ կարճումը:

16. Չափից երկար ձգձգումների դեպքում դատավորների համար պետք է գործեն վարույթը կարճելու միջնորդություն ներկայացնելու ընթացակարգեր:

17. Դատավորները պետք է ունենան իրենց նկատմամբ հարուցված կարգապահական վարույթներին արդյունավետորեն մասնակցելու եւ իրավական ներկայացուցչություն ունենալու հնարավորություն:

18. Նրանք պետք է իրավունք ունենան բողոքարկելու կարգապահական որոշումները եւ կարգապահական տույժերը:

19. Կարգապահական տույժերը պետք է լինեն օրենքով հստակ սահմանված, լինեն հեշտ հասանելի եւ ներկայացվեն սպառիչ ցանկի ձևով:

20. Դատավորի նկատմամբ կիրառված ցանկացած կարգապահական տույժ պետք է լինի համաչափ:

21. Դատավորին պաշտոնից ազատելու մասին որոշումը պետք է կայացնել միայն որպես վերջին միջոց՝ բացառիկ լուրջ դեպքերում:

22. Բոլոր դեպքերում տույժի համարժեքությունը գնահատելիս պետք է հաշվի առնել այն հնարավոր բացասական ազդեցությունը, որ կոնկրետ տույժը կարող է թողնել առանձին դատավորի եւ մյուս դատավորների վրա:

23. Վեթինգը չպետք է կիրառվի կարգապահական միջոցների փոխարեն: Վեթինգը նա եւ չպետք է կիրառվի որպես կոռուպցիայի դեմ պայքարի միջոց: